

իւր հօր անունն էլ Դաւիթ է, ուստի օտարներէն ոմանք զմեզ եղբայր կարծած են
Նաեւ, բայց մենք ոչ եօթ աստիճան, այլ տասներօթ աստիճան իրարմէ հեռու ենք:
Գանք ուրեմն երկրորդ խնդրոյն, եթէ այդ էլ այսչափ ծանր է...

— Ոչ, կարծեմ քիչ մը աւելի ծանր է, Գրիգոր: Զուքոյդ Արփենին գիտես թէ ես
ինչչափ կը սիրեմ, բայց մէկ-երկու օր կայ, որ կասկած մը սիրտս մտաւ, ոչ
Արփենիին համար, որ դեռ տղայ է, այլ եղբօրս՝ Վարդին համար, որ օրաւուր
Արփենիէ չկրնար զատուիլ. շարունակ Արփենիի հետ կատակներ կընէ, եւ այն
երիտասարդը, որ որսէ զատ ուրիշ բանէ զուարճութիւն չէր զգար, հիմա որսի
երթալը նաեւ դադրեցուց, եւ նորա ընկերութիւնը միայն կը փնտրէ:

— Այդ խնդիրն աւելի ծանր է: Եթէ մենք սիրով եւ յոյսով կապուած չլինէինք հոգ
չէր, բայց այդ նոր համակրութիւնը կամ զիրենք թշուառ կրնայ ընել կամ զմեզ.
այդ բանին ճար պետք է տեսնել:

— Ինչպե՞ս, իրաւունք ունէի ուրեմն մտածելու եւ տխրելու:

— Ես մորմեղ խնդրեցի Բագրեւանդ երթալ, բայց նա արգելիչ պատճառներ
ցցուց եւ հօրդ դրել խոստացաւ, եթէ իւր հրամանը զինք Շիրակ դրկէ, խնդիրը
այսպէս կը վերջանայ:

— Եթէ Ատոմ հայրիկ հոս լինէր եւ առողջ, ինչչափ մեզի կրնար օգնեմ:

— Ի՞նչ կ'ընէր:

— Նա մօրս կ'իմացներ ամէն բան:

— Ի՞նչ կ'իմացներ:

— Կ'իմացներ թէ մենք զիրար կը սիրենք, Վարդ կը յուսահատեր եւ ամէն բան կը
վերջանար:

— Մայրդ ինչ կ'ըսէր: Միթէ չէր ըսեր թէ անտուն անժառանգ երիտասարդի մը
Ռշտունեաց Օրիորդ չէ կարելի տալ:

— Զու երկու տարուան բրած բարձր ծառայութիւնքդ. Ռշտունեաց տան համար
իմ ծնողքս չեն կրնար մոռնալ, եւ փոքրիկ վարձատրութիւն մը կ'ընեն՝ իմ ձեռքս
քեզի կուտան...